

ԴԱՏՈՒԿ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍԱՐՄԱՆԱՉԱՏՄԱՆ ԴԻՄԱԿԱՆ ԴԻՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐԵՎԱԿԱՆ ԴՐԵՎԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԻՒՄ

Աղթուր Չախոյան

*ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ,
Երևան քաղաքի դատախազության ավագ դատախազ*

Վերջին ժամանակներում իրավաբանական գրականության մեջ¹ հանցագործությունների քննության ընթացքում իրավագիտության բնագավառի որոշ գիտելիքների հատուկ գիտելիքներին վերագրելու հարցի կապակցությանք բավականին վիճելի տեսակետներ կամ:

Հանցագործությունների քննության ընթացքում արարքներին իրավական գնահատական տալու համար շատ հաճախ բավական չի լինում միայն գտնել անհրաժեշտ իրավական ակտն ու ուսումնասիրել այն, այլ անհրաժեշտություն է առաջանում խորությանք հետազոտել տվյալ ակտը, քանի որ դրանում գործածվող առանձին հասկացությունների բովանդակությունն ընկալելու համար պահանջվում է գիտության, տեխնիկայի, արվեստի կամ արհեստի բնագավառի ներ մասնագիտական գիտելիքներ:

Քննարկվող խնդրի վերաբերյալ խիստ բացասական վերաբերմունքը վերջին ժամանակներս աստիճանաբար տեղը զիջում է առավել հանդուրժողական մոտեցմանը: Տ. Վ. Ավերյանովան, որը խիստ դեմ է եղել իրավական որոշ գիտելիքները հատուկ գիտելիք համարելուն, վերջիվերջո խոստվանում է, որ հետաքրքիր է Յու. Գ. Օռլովի այն միտքը, համաձայն որի. «Իրավաբանական փորձաքննության առարկա, եթե այդպիսին կպահանջվի, կարող է լինել միայն հարցն այն նասին, թե որ օրենքը կամ ենթաօրենսդրական ակտն է ենթակա կիրառման տվյալ գործով»²: Ենթադրությունը կարելի է լուծել իրավական հարցերով խորհրդատվություն ստանալու միջոցով³:

Ե. Լ. Ռոստումսկայայի կարծիքով էլ՝ «հասունացել է անհրաժեշտությունը օրինականացնելու իրավաբանական փորձաքննությունների անցկացումն այն դեպքերում, երբ քրեական, քաղաքացիական կամ վարչական իրավախսականությունների վերաբերյալ գործեռություններ, որոնց չեն տիրապետում քննիչը, դատարանը կամ վարչական իրավախսականությունը պահպանում է»⁴:

Խնդրի այդպիսի առաջադրման համար, ըստ Ա. Ս. Պողչիբյակինի, հիմքեր կամ, քանի որ իրավական բարեփոխումների անցկացումը վերցերս նորից է շոշափում տվյալ

¹Տե՛ս, օրինակ. **Էքսարխովո Ա. Ա.** Специальные познания и их применение в исследовании материалов уголовного дела. СПб., 2005, էջ 62-92:

² **Орлов Ю. Կ.** Судебная экспертиза как средство доказывания в уголовном судопроизводстве, М., 2005, էջ 20:

³Տե՛ս **Авերյաнова Т. В.** Судебная экспертиза. Курс общевой теории, М., 2006, էջ 181:

⁴ **Россинская Е. Р.** Судебная экспертиза в гражданском, арбитражном, административном и уголовном процессе, М., 2005, էջ 17:

հիմնախնդիրը: Այսպես, «Ո՞՛ Սահմանադրական դատարանը, իհմնվելով «Ո՞՛ Սահմանադրական դատարանի մասին» Դաշնային սահմանադրական օրենքի 63 հոդվածի վրա, բռնվող գործերով որպես փորձագետներ, մասնագետներ գործնականորեն ներգրավում է իրավունքի տարբեր ոլորտների մասնագետների»⁵:

Ո՞՛ Սահմանադրական դատարանի պրակտիկայում հաճախ են նշանակվում իրավաբանական փորձաքննություններ, որոնք իրականացնում են իրավագիտության թեկնածուներ, դոկտորներ:

Եթե համեմատություններ անցկացնենք ՀՀ սահմանադրական և ՀՀ քրեադատավարական իրավունքի ճյուղերի միջև, ապա կարող ենք ասել, որ Յայաստանի Յանրապետությունում սահմանադրական դատավարությունների ժամանակ նույնպես լայնորեն կիրառվում են հատուկ գիտելիքներ: Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Սահմանադրական դատավարության իր համաձայնությամբ որպես փորձագետ կարող է ներգրավվել այն անձը, որը քննվող գործին առնչվող հարցերով օծոված է հատուկ գիտելիքներով և շահագրգուված չէ գործի արդյունքով»: Իսկ նոյն հոդվածի 8-րդ մասը սահմանում է, որ «Փորձագետի եզրակացության իրավական հարցերին վերաբերող մասը չունի ապացուցողական նշանակություն»: Այսինքն, ի տարբերություն Ռուսաստանի Դաշնության սահմանադրական դատավարությամ՝ ՀՀ սահմանադրական դատավարությունում իրավական հարցերով փորձաքննություն չի կարող նշանակվել:

Կարծում ենք, որ հասունացել է ժամանակը, որը թելադրված է նաև պրակտիկ փորձով, վերանայելու հատուկ և իրավաբանական գիտելիքների սահմանազատման հարցը: Եվ այս առումով մեզ համար ողջունելի է ՀՀ սահմանադրական դատարանի այն առաջավոր փորձը⁶, երբ «զլիսավոր դատախազի վարույթում գտնվող կոնկրետ գործ» հասկացության իրավական բովանդակության վերաբերյալ փորձագիտական եզրակացություն ստանալու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ ՀՀ սահմանադրական դատարանն իր 2010 թվականի դեկտեմբերի 24-ի ՍԴԱՌ-116 աշխատակարգային որոշմամբ դիմել է Երևանի պետական համալսարանի քենական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնին:

Տեսության մեջ եղած բազմաթիվ կարծիքների համաձայն՝ հասունացել են նորմատիվ ակտերի հետազոտությանը և դրանց հիմքի վրա իրավակիրառ ակտերի իրատարակման հիմնավորվածությանը նվիրված դատական փորձաքննությունները որակելու և համակարգելու անհրաժեշտությունը: Նման փորձաքննություններն առաջարկվում է անվանել դատանորմատիվային:

«Դատանորմատիվային փորձաքննության կոնցեպցիան սրանով չի սպառվում: Այն թույլ է տալիս նման փորձագիտական հետազոտությունների միասնական մոտեցում մշակել և ձևակերպել նոր տեսակի դատական փորձաքննությունների առարկան և խնդիրները, որոնց իրականացումն անհրաժեշտ է և արդեն գոյություն ունի առանց համապատասխան տեսական և մերոդարանական հենքի: Դա, օրինակ, նորմատիվ-հարկա-

⁵ **Подшивякин А. С.** О «вторжении» судебного эксперта в сферу права и возможности использования им норм международного права, Судебная экспертиза на рубеже тысячелетия, Материалы межведомственной научно-практической конференции, Часть 2, Саралов, 2002, № 131:

⁶Տես <http://www.concourt.am/armenian/decisions/working/2010/pdf/sdav-116.pdf>, 24.11.2011:

յին, նորմատիվ-քնապահպանական, նորմատիվ-հողաշինարարական փորձաքննություններն են, նորմատիվային փորձաքննություններ, որոնք կապված են սեփականաշնորհման և շատ այլ հարցերի հետ»⁷:

Դատանորմատիվային փորձաքննությունների կոնցեպցիայի մշակումը բավական արդիական է նաև հաճալիր փորձաքննությունների խնդիրները լուծելու առումով, որոնք վերաբերում են ծայրահետ պայմաններում անձանց գործողությունների համապատասխանության ուսումնասիրության համար գոյություն ունեցող նորմերին և կանոններին (վարորդի, հրշեցի, փրկարարի, զինվորական ստորաբաժանումների գործողություններ):

Գրականության մեջ կան նաև հակառակ տեսակետներ: Ինչպես նշում է Ա. Ա. Էյմանը, «օրենսդրության և իրավագիտության բնագավառի գիտելիքները՝ իրավաբանական գիտելիքները, չեն վերաբերում հատուկ գիտելիքներին այն իմաստով, որով այդ հասկացությունն օգտագործվում է օրենքում»⁸: Այդպիսի տեսակետ արտահայտվում է շատ կրիմինալիստների և դատավարագետների կողմից⁹:

«Քննչը քննչական գործողություններ իրականացնելիս միշտ օգտագործում է հատուկ գիտելիքներ, հմտություններ և կարողություններ: Նրան ահրաժեշտ են հատուկ գիտելիքներ գիտության և տեխնիկայի տարբեր ոլորտներից: Սակայն, բացի ոչ իրավական հատուկ գիտելիքներից, հմտություններից և կարողություններից, քննիչին քրեական գործերի քննության համար անհրաժեշտ են նաև իրավական հատուկ գիտելիքներ, հմտություններ և կարողություններ: Նա պետք է իմանա քրեական և քրեադատավարական օրենսդրությունը, տիրապետի քննչական գործողությունների անցկացման տակտիկային և հանցագործությունների առանձին տեսակների քննության մեթոդիկային: Այդ պատճառով չկայացած չի կարող համարվել այն պնդումը, որ հատուկ գիտելիքները չպետք է վերաբերեն օրենքի ոլորտին»¹⁰:

Փորձագետին իրավական հարցեր առաջարելու թույլատրելիության վերաբերյալ տեսությունում բազմաթիվ կարծիքներ կան¹¹, առաջարկվում է, օրինակ, հանցագործության առանձին տեսակների քննության ժամանակ «իրավական փորձաքննություն» նշանակելու թույլատրելիության մասին, չնայած իրավաբանական գիտելիքների օգտա-

⁷ Специальные юридические знания и судебно-нормативные экспертизы, <http://kollegia.net/articles.php?serv=209&part=5564>, (12.03.2009):

⁸Տես Էնցման Յ. Յ. Заключение эксперта, М., 1967, էջ 91:

⁹Տես Мальникова Յ. Բ. Компетенция криминалистической экспертизы и оценка заключения эксперта в свете нового уголовно-процессуального законодательства, Вопросы криминалистики, М.: Госюриздат, 1962, № 3, էջ 32-43; Лисиченко В. К., Циркаль В. В., Использование специальных знаний в следственной и судебной практике, Киев, 1987, էջ 23: Бөлкін Р. С., Курс криминалистики, М., 2001, էջ 471:

¹⁰Линдамэз Խ. Понятие специальных знаний, навыков и умений, Использование специальных знаний в советском уголовном процессе, Труды по правоведению, Ученые записи Тарумского университета, Тарту, 1984:

¹¹Տես Арсеньев В. Д., Заболоцкий В. Г., Использование специальных знаний при установлении фактических обстоятельств уголовного дела, Красноярск, 1986, էջ 1-5; Грамович Г. И., Тактика использования специальных знаний в раскрытии и расследовании преступлений, МВШ МВД СССР, 1987, էջ 10-11:

գործնան հարցը փորձագետի եզրակացության մեջ չպետք է նշվի¹²:

Իրականում «հատուկ գիտելիքներ» հասկացությունը կիրառվում է միայն իրավական ոլորտում, և անտրամաբանական է իրավաբանական գիտելիքները ամբողջովին վերասահմանել որպես հատուկ գիտելիքներ իրավաբանական ոլորտում: Մյուս կողմից՝ քննիչների և դատավորների մասնագիտական գիտելիքները լայն հասկացություն են, որոնք կարող են «հատվել» այլ իրավական գիտելիքների հետ: Ընդունում ենք, որ պահանջվում է որոշակիացում հետաքննություն կատարող անձի, քննիչի, դատախազի և դատավորի որակավորման հատկանիշին համապատասխան գիտելիքի առանձնացման միջոցով: Հատուկ գիտելիքների անհրաժեշտությունը ծագել է՝ կապված այն անձանց հետ, որոնք պատասխանատու են քրեական դատավարության գործընթացի համար: Պետք է «հատուկ» անվանել այն գիտելիքները, որոնք անցնում են այդ անձանց մասնագիտական գիտելիքները սահմանները:

Իրավական գիտելիքների սահմանման վերաբերյալ կարծիք է հայտնել Ս. Բիչկովան, որի տակ նա առաջարկել է հասկանալ «...քրեական դատավարության համար պատասխանատու անձանց գիտելիքները մասնավորապես գործունեության որակավորման և դատավարական նորմերի իրականացման լիազորությունների, հանցագործությունների քննության մեթոդիկայի և քննչական գործողությունների իրականացման տակտիկայի վերաբերյալ: Նշված թվարկումը հետաքննություն կատարող անձի, քննիչի, դատախազի և դատավորի ընդհանուր որակավորող հատկանիշ է՝ հիմնված իրենց մասնագիտացումը որոշող պարտադիր մասնագիտական գիտելիքների վրա: Կոնկրետ քրեական գործով ապացուցման սուբյեկտների կողմից օգտագործվող բոլոր գիտելիքները, այդ թվում և՝ իրավաբանական, նշված գիտելիքների, հնարքների և հմտությունների սահմաններից դուրս կարող են դասվել հատուկ գիտելիքների շարքը»¹³:

Ա. Ա. Էկսարխովունը նշում է. «Կարծրատիպերի թվին նախ և առաջ պետք է դասել այն տեսակետը, ըստ որի՝ իրավական ոլորտի գիտելիքները հատուկ չեն համարվում: Եվ նախկինում, և մեր օրերում որպես այս եզրահանգման հաստատում է ԽՍՀՄ 1971 թ. Գերազույն դատարանի ալենումի «Քրեական գործերով դատական փորձաքննության մասին» որոշումը¹⁴, որի 11-րդ կետը սահմանում է, որ «դատավորները չպետք է փորձագետին առաջադրեն իրավական հարցեր՝ որպես նրա իրավասության մեջ չնտնող ոլորտ (օրինակ, սպանություն է, թե՞ ինքնասպանություն)»¹⁵:

Նշենք, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրքը) մուտքումն այս հարցի վերաբերյալ հետևյալն է. չի թույլատրվում քրեական գործերով վարույթին իրավաբանական հարցերով մասնագետ կամ փորձագետ ներգրավել: Օրենսգրքի 84-րդ հոդվածի 3-րդ և 85-րդ հոդվածի 3-րդ կետերը համապատասխանաբար սահ-

¹²Տե՛ս **Российская Е. Р.** Специальные познания и современные проблемы их использования в судопроизводстве, Ժурнал Россиjsкого права, 2001, № 5, էջ 32-43; **Несторов А. В.** Концептуальные основы использования специальных познаний в раскрытии и расследовании преступлений, Афтөреф. дис., М., 2001, էջ 15-16:

¹³ **Бычкова С. Ф.** Организация назначения и производства судебной экспертизы, Алматы, «Жемі жарғы», 1999, էջ 6-7:

¹⁴ Постановление N 1. Пленума Верховного Суда СССР от 16 марта 1971 года “О судебной экспертизе по уголовным делам”:

¹⁵ **Эксархопуло А. А.** Специальные познания в уголовном процессе и их нетрадиционные формы, Вестник криминалистики, Вып. 2, М., 2001, էջ 26:

մանում են. «Քրեական գործով վարույթում իրավաբանական հարցերով նաև նախագետ չի ներգրավվում», «Քրեական գործով վարույթին իրավաբանական հարցերով փորձագետ չի ներգրավվում»: Ինչպես տեսնում ենք, Օրենսգիրքը հատուկ գիտելիքների կիրառման հնարավորության երկու ձև է նախատեսում՝ հատուկ գիտելիքների կիրառումը մասնագետի կողմից և հատուկ գիտելիքների կիրառումը փորձագետի կողմից: Քրեական դատավարության նշված սուբյեկտների և նրանց դատավարական վիճակին վերաբերող հարցերը սահմանվում են օրենսգրքի 10-րդ գլխում, որը վերնագրված է «Քրեական դատավարությանը մասնակցող այլ անձինք»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ) քննարկվող հարցերին այլ կարգավորում է տվել, և դրանք կարգավորվում են նախագիծ 7-րդ գլխով, որը վերնագրված է «Վարույթին օժանդակող անձինք», ինչն ավելի ընդունելի է և, մեր կարծիքով, բխում է նշված գլխում առանձնացված սուբյեկտների դատավարական վիճակից:

Նախագծում, ի տարբերություն Օրենսգրքի, հատուկ գիտելիքները կարող են կիրառվել միայն փորձագետի կողմից, այսինքն՝ վարույթի ընթացքում որպես «մասնագետ» սուբյեկտ նախատեսված չեն: Դամաձայն Նախագիծի 59-րդ հոդվածի՝ փորձագետը վարույթի առարկայով չշահագրգուված այն անձն է, ով, վարույթն իրականացնող մարմնի կամ վարույթի մասնավոր մասնակցի կողմից ներգրավվելով, հատուկ գիտելիքների կամ հնատությունների օգտագործմանը օժանդակում է վարույթին՝

1) հետազոտություն իրականացնելով և դրա հիման վրա գրավոր եզրակացություն տալով.

2) հետազոտություն իրականացնելով կամ առանց դրա գրավոր կարծիք տալով.

3) ապացուցողական կամ այլ վարութային գործողության կատարմանն աջակցելու միջոցով:

Իսկ նույն հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ փորձագետը պետք է տիրապետի գիտության, տեխնիկայի, արվեստի, արհեստի կամ այլ բնագավառի բավարար հատուկ գիտելիքների:

Հոդվածի վերլուծությունից պարզ է դառնում, որ փորձագետը վարույթի ընթացքում կարող է հանդես գալ մի քանի դատավարական վիճակով՝

1. որպես փորձագետ, երբ իրականացնում է հետազոտություն և դրա հիման վրա տալիս է եզրակացություն, ինչը, համաձայն Նախագիծի 91-րդ հոդվածի, հանդիսանում է ապացույցի ինքնուրույն տեսակ,

2. որպես «մասնագետ», երբ փորձագետն իր մասնակցությամբ աջակցում է ապացուցողական կամ այլ վարութային գործողության կատարմանը, որոնց արձանագրությունները, համաձայն Նախագիծի 95-րդ հոդվածի, նույնպես հանդիսանում են ապացույցի ինքնուրույն տեսակ,

3. որպես «փորձագետ-մասնագետ», երբ փորձագետն իրականացնում է հետազոտություն կամ չի իրականացնում հետազոտություն և տալիս է գրավոր կարծիք, ինչը, համաձայն Նախագիծի 92-րդ հոդվածի, նույնպես հանդիսանում է ապացույցի ինքնուրույն տեսակ:

Ընդ որում, վարույթն իրականացնող մարմինը քրեական վարույթին օժանդակելու համար կարող է փորձագետ ներգրավվել միայն փորձաքննություն նշանակելիս և ապացուցողական կամ այլ վարութային գործողություններ կատարելիս, այսինքն՝ վարույթն

իրականացնող մարմինը փորձագետի գրավոր կարծիք ստանալու համար վարույթին փորձագետ չի կարող ներգրավել: Քենական վարույթին փորձագետի գրավոր կարծիք կարող է ներկայացնել միայն վարույթի մասնավոր մասնակիցը:

Անդրադառնալով հատուկ և իրավական գիտելիքների սահմանազատման հիմնախնդիրներին՝ նշենք, որ Նախագիծը քննարկվող խնդիրը գրեթե նույնանման է կարգավորել, ինչպես Օրենսգիրքը: Համաձայն Նախագիծի 59-րդ հոդվածի 4-րդ մասի՝ քրեական վարույթին Հայաստանի Հանրապետության իրավունքի կամ միջազգային իրավունքի հարցերով փորձագետ չի ներգրավվում:

Սակայն, օրինակ, Գերմանիայի Դաշնության օրենսդրությունը, այս կամ այն կերպ չսահմանափակելով հատուկ գիտելիքների պատկանելիության ոլորտը, թույլատրում է փորձաքննություն նշանակել նաև իրավաբանական բնույթի հարցերի պարզաբանման համար, եթե դատավորը բավարար գիտելիքներ չունի տվյալ իրավական ոլորտի վերաբերյալ¹⁶: Նման մոտեցումը արդարացի է այն պարզ պատճառով, որ դատավորը չի կարող տիրապետել հայրենական և օտարերկրյա իրավունքի բոլոր աղբյուրներին, և նման դեպքերում ավելի արդյունավետ կլինի դատավորին իրավական օգնություն ցուցաբերել, քան վերջինիս բողնել ինքնուրույն պարզաբանել, ենթադրենք, իրեն քիչ հայտնի օտարերկրյա իրավունքի որևէ օրենսդրական ակտ:

Մեր կարծիքով, հանցագործությունների քննության և լուծման ընթացքում քննիչները և դատավորները իրավական խնդիրները պետք է կարողանան ինքնուրույն լուծել, և «հատուկ գիտելիքներ» հասկացությունը պետք է թույլատրվի միայն առանձին իրավաբանական գիտելիքների անհրաժեշտության դեպքում: Հատուկ գիտելիքների, բացառությամբ իրավունքի ոլորտի գիտելիքների, հասկացության էլության գնահատման ավանդական մոտեցումը հայտնի չափով պայմանավորված է նախ և առաջ նրանով, որ յուրաքանչյուր մասնագիտական գործունեություն իրականացնող սուբյեկտի համար «հատուկ» լինել չի կարող, քանի որ չի ելնում նրա մասնագիտության շրջանակներից: Մասնագետի համար նրա գործունեության ոլորտը չի կարող լինել «հատուկ», «սպեցիֆիկ»: Այդպիսին կարող է դիտվել միայն պրակտիկ գործունեության ոլորտը կամ տեսական գիտելիքների ոլորտը, որոնք պահանջում են գիտության այլ ճյուղերում կամ այլ ոլորտներում մասնագիտական նախապատրաստություն կամ այդ գիտելիքների գործնական կիրառում:

Ասվածը նշանակում է, որ հարցերը, որոնցով պետք է գրադարձն հետաքննության, նախաքննության, դատախազության կամ դատական մարմինները մասնագիտական մակարդակով, չեն կարող սկզբունքորեն դառնալ իրավասու անձի, այդ թվում նաև անկախ փորձագետի ուսումնասիրման և գնահատման առարկա:

Քննիչը, հետաքննության մարմնի աշխատակցի, դատախազի, դատավորի վրա պարտավորություն դնել, որ վերջիններս իրազեկ լինեն իրավունքի այսօր հայտնի ճյուղերի և ենթաճյուղերի բոլոր հարցերին, որոնց իմացությունը կարող է պահանջվել նախական քննության ընթացքում կամ քրեական գործերի դատական քննության ժամանակ, կնշանակի քննիչին, դատավորին դնել դժվար, նույնիսկ անելանելի վիճակում: յուրացնել այդ գիտելիքները որակյալ և պատասխանատու որոշումներ ընդունելու պահանջվող ծավալով իրականում անհանար է:

Այսօր պարզ է դառնում, որ վերջին տարիներին ընդունված նորմատիվային ակտե-

¹⁶ Տե՛ս *Давтян А. Г.* Гражданскиý процесс в Германии и странах СНГ, Еր., 2000, էջ 168:

ոի այն առատության մեջ, որոնք պետք է իմանալ նոր տիպի հանցագործություններ քննելիս, և որոնցով պետք է ղեկավարվեն քննիչները, դատախազները, դատավորները իրենց աշխատանքում, ոչ մի իրավաբան պրոֆեսիոնալ մակարդակով ի վիճակի չէ տիրապետելու: Յնարավոր չէ որակյալ քննել հարկային հանցագործություններ, որոնք հիդականացվում են բանկային գործունեության և ձեռներեցության ոլորտում, առանց ունենալու անհարաժեշտ պատրաստվածություն քաղաքացիական, ֆինանսական և բանկային իրավունքում, հանցագործությունների բարձր տեխնոլոգիաների ոլորտում՝ չիմանալով ինֆորմացիոն անվտանգության իրավական ապահովման հարցերը և այլն:

Չնորանանք նաև, որ ՀՀ քրեական օրենսգրքի բազմաթիվ հոդվածների դիսպոզիցիաներ բլանկետային են (օրինակ՝ 232-րդ հոդված՝ հրդեհային անվտանգության կանոնները խախտելը, 241-րդ հոդված՝ երկաթուղային, օդային կամ ջրային տրանսպորտի երթևեկության անվտանգության կամ շահագործման կանոնները խախտելը, 242-րդ հոդված՝ ճանապարհային երթևեկության և տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելը և այլ), և գործնականում այդ կանոնների խախտումները պարզելու համար նշանակվում են փորձաքննություններ, որոնց իրականացման ժամանակ փորձագետը երթեմն օգտագործում է միայն իրավական գիտելիքները. Իրեն առաջադրված հարցերին լուծում տալու համար օգտվում է միայն օրենքներից և ենթաօրենսդրական ակտերից, այսինքն՝ տալիս է միայն իրավական գնահատական (օրինակ՝ դատատնտեսագիտական և հաշվապահական, դատապարանքագիտական, դատապատութեխնիկական, դատաշինարարատեխնիկական և ճարտարագիտատեխնիկական, նՏՊ հանգանաքների. տրանսպորտային միջոցների տեխնիկական վիճակի և տրանսպորտատեխնիկական, դատահրեհատեխնիկական և այլ):

Մեր կարծիքով, ճիշտ կլիներ, եթե այդպիսի փորձաքննությունները նշանակվեին և կատարվեին համալիր, եթե, բացի տվյալ բնագավառի հատուկ գիտելիքներով օժտված անձից, փորձաքննությանը մասնակցեր նաև իրավագիտության բնագավառի հատուկ գիտելիքներով օժտված անձը: Դա կնպաստի տվյալ փորձաքննության ընթացքում կիրառվող իրավական ակտերի ճիշտ կիրառելուն կամ մեկնաբանելուն, ավելին՝ չի կիրառվի այնպիսի իրավական ակտ, որն ուժը կորցրել է կամ ենթարկվել է որոշակի փոփոխությունների:

Նաև ճիշտ ենք համարում այն մոտեցումը, որ քրեական գործերի քննության ընթացքում այնպիսի իրավական հարցերի վերաբերյալ, որոնք դուրս են քննիչի, դատախազի, դատավորի ներ մասնագիտական գիտելիքներից, պաշտոնական հարցումներ կատարել տվյալ ոլորտում ներ մասնագիտացված մասնագետներից՝ իրավագիտության թեկնածուներից, դոկտորներից, տվյալ բնագավառի պաշտոնատար անձանցից, որոնց պատասխանները քննիչի, դատախազի, դատավորի համար կլինեն խորհրդատվական բնույթի և կողմնորոշչի, իսկ առանձին վերցրած՝ չեն կարող հանդես գալ որպես ինքնուրույն ապացույց: Դա ոչ միայն կիեշտացնի և կարագանի քրեական գործերի քննությունը, այլ նաև կնպաստի քրեական գործերի օբյեկտիվությանը:

Քննարկվող հարցի վերաբերյալ մեր համար ընդունելի է Վ. Ն. Մախովի առաջարկը, համաձայն որի՝ «հատուկ գիտելիքների» թվին պետք է դասել նաև որոշ իրավական գիտելիքներ՝ բացառելով քննիչների և դատավորների մասնագիտական գիտելիքները: «...Քննիչի (դատավորի) մասնագիտական գիտելիքներն իրավական գիտելիքներ են: Բայց ոչ բոլորը, այլ ամենից առաջ քրեական իրավունքի, քրեական դատավարության և կրիմինալիստիկայի գիտելիքները: Բուհում ուսումնասիրելով տնտեսական, աշխատան-

քային, միջազգային իրավունք և մի շարք այլ ճյուղային իրավական գիտություններ՝ քննիչները կարող են իրենք իսկ տիրապետել իրավունքի համապատասխան ճյուղերի ոչ բարդ իրավաբանական հարցերում։ Բայց իրավաբանների մեջ նույնային կա մասնագիտացում։ Միայլ կլիներ քննիչի կողմից անմտեսել իրավական գործունեության նեղ ոլորտում մասնագիտացող իրավաբանների՝ իր մասնագիտական գործունեության սահմաններից անցնող խորը գիտելիքները»¹⁷։

Վ. Ն. Սախովը, սահմանազատելով իրավաբանական գիտելիքները, որոնցում նշում է նաև կրիմինալիստիկան, մոռանում է, որ կրիմինալիստիկական տեխնիկան իրավաբանական այն դրկտրիններից է, որն առավել քան իրավունքի որևէ ճյուղ, «հատուկ»՝ բացառիկ գիտելիքներ է պահանջում (օրինակ՝ գրի կրիմինալիստիկական հետազոտումը, փաստաթղթերի տեխնիկակրիմինալիստիկական հետազոտումը և այլն)։

Պետք չէ ժմանակակից ունի բարդ կառուցվածք, որը ներառում է ինչպես իրավաբանական, այնպես էլ տեխնիկական գիտելիքներ։

ISSUES OF DELIMITATION OF SPECIAL AND LEGAL KNOWLEDGE IN CRIMINAL PROCEDURE OF THE RA

Artur Chakhoyan

Associate Professor of YSU Department of Criminal process and Criminology, Senior prosecutor of the City of Yerevan

In recent years, raised disputes in the professional literature concerning the issue of admissibility of judicial normative expertises during the investigation of crimes, which rises in the theory and practice certain difficulties by delimitating special and legal knowledge.

For giving a legal assessment to the behavior during investigation of crimes it is often not enough to find only necessary legal act and to investigate it, but it is necessary to thoroughly investigate such act, as for understanding the content of some concepts it is required specialized knowledge of science, technology, arts.

In the article different approaches concerning the issue from the legal literature, the provisions of Criminal Procedure Code and of its draft are analyzed. On the basis of the analysis own approach is proposed which is grounded by the abundance and complexity of adopted acts during recent years in the Republic of Armenia, by which investigators, prosecutors, judges should be guided in their work.

¹⁷Տես **Махов В. Н.**, Использование знаний следящих лиц при расследовании преступлений, М., 2000, էջ 46-47։

ПРОБЛЕМА ДЕМАРКАЦИИ СПЕЦИАЛЬНЫХ И ПРАВОВЫХ ЗНАНИЙ В УГОЛОВНОМ ПРОЦЕССЕ РА

Артур Чахоян

Старший прокурор города Еревана

Доцент кафедры Уголовно процесса и криминалистики ЕГУ,

Кандидат юридических наук,

В последние годы в специальной литературе возникает спор относительно вопроса допустимости назначения судебно-нормативной экспертизы во время расследования преступлений, в связи с чем возникают определенные трудности в вопросе установления теории и практики правовых знаний.

Во время расследования преступлений для установления правовой оценки поведения часто бывает не достаточно только найти и исследовать правовой акт, необходимо тщательно расследовать данный акт, так как для понимания содержания некоторых концепций необходимо наличие специальных знаний в области науки, техники и искусства.

В статье представлены и проанализированы различные подходы, существующие в юридической литературе, положения Уголовно-процессуального кодекса и проекта. На основе анализа предлагается собственный подход, который основан на обилии и сложности принятых нормативных актах в последние годы в Республике Армения, которыми должны руководствоваться следователи, прокуроры, судьи.

Рամալի բառեր – հատուկ գիտելիք, իրավական գիտելիք, փորձագետ, մասնագետ, փորձաբանություն, Եզրակացություն, փորձագետի կարծիք

Keywords: special knowledge, legal knowledge, expert, specialist, expertise, conclusion, expert opinion

Ключевые слова: специальные знания, правовые знания, эксперт, специалист, заключение, мнения экспертов